ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2018-4-2-Ա

ք. Երևան 01.08.2018թ.

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2018 թվականի օգոստոսի 1-ի նիստում քննարկեց 2018 թվականի հուլիսի 25-ին արտոնագրային հավատարմատար Ալեքսանդր Նահապետյանի կողմից ներկայացված՝ KALCEKS, akciju sabiedrība (Krustpils iela 53 LV-1057 Rīga) ընկերության «AKCIJU SABIEDRIBA KALCEKS» (IR1310969) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

Հայտի ըստ էության փորձաքննության ընթացքում պարզվել է, որ հայտարկված ապրանքային նշանը պարունակում է տարբերակիչ հատկություն չունեցող տարր՝ «akciju sabiedriba» գրառումը (անգլերենից թարգմանաբար՝ բաժնետիրական ընկերություն), որն «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 93-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված հիմքերով ենթակա չէ առանձին գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ չունի տարբերակիչ հատկություն և հանդիսանում է նկարագրական բնույթի նիշ և որի ինքնուրույն պահպանության չտրամադրման մասին հայտարարություն չի ներկայացվել:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի դրույթները բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը ամբողջությամբ բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումը ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը ամբողջությամբ գրանցելու մասին, քանի որ

հայտատուն ներկայացրել է հայտարարություն «akciju sabiedriba» արտահայտության նկատմամբ բացառիկ իրավունքից հրաժարվելու մասին:

Փորձաքննության բաժնի փորձագետը նույնպես համաձայնվեց, որ ապրանքային նշանը տվյալ դեպքում կարող գրանցվել «akciju sabiedriba» արտահայտությանը ինքնուրույն պահպանություն չտրամադրելով:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Բողոքը ամբողջությամբ բավարարել, փորձաքննության որոշումը ամբողջությամբ չեղյալ ճանաչել և «AKCIJU SABIEDRIBA KALCEKS» (IR1310969) ապրանքային նշանը ամբողջությամբ գրանցել՝ «akciju sabiedriba» արտահայտությանը ինքնուրույն պահպանություն չտրամադրելով:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ